ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2025

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ. ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

ԹԵՍՏ

ՄԱՐԶ----------

ՔԱՂԱՔ/ԳՅՈՒՂ----------

ԴՊՐՈՑ----------

ԴԱՍԱՐԱՆ----------

ԱԶԳԱՆՈՒՆ----------

ԱՆՈՒՆ----------

ՀԱՅՐԱՆՈՒՆ----------

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ----------

ԷԼ. ՓՈՍՏ----------

Սիրելի՛ աշակերտ, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում ընդհանուր 20 միավորից հանվում է 0,25 միավոր: Պատասխանները լրացնել վերջին էջում: Մաղթում ենք հաջողություն:

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *գ*.

1) անզու…ական, բարվո…ել, անհա…, ճ…նակյաց
2) բարեկար…, պատարա…, ամո…իչ, շո…եքարշ
3) անօ…ուտ, ճրա…, հրաձ…արան, պար…ևատրել
4) փափա…ել, դիցու…, հո…սաշատ, նորո…ել

2. **Նշել այն բառերի (բառաձևերի) համարները, որոնցում ուղղագրական *սխալ կա*.**

1. ամպագորգոռ, 2. առհամարել, 3. միմիայն, 4. ժողովածույում, 5. նշխար, 6. քառորդ, 7. զիչել, 8. հեղեղուկ, 9. ընդարվել, 10. նաֆթ, 11. ճամպրուկ, 12. պատնեշ:

3. Ո՞ր շարքի բոլոր հարադրավոր հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.

1) ՀԱՅՐ ՄԽԻԹԱՐ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ԵԿԵՂՅԱՑ ԳԱՎԱՌ, ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
2) ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ԲԱԶՈՒՄԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ, ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
3) ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
4) ՅՈԹՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՄԱՐՏԻ ՈՒԹ, ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ, (ՄԱԿ-Ի) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

4. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու* ձայնավորի հնչյունափոխություն *կա*.

1) ցնցում, սնունդ, վերստին, բնափայտ
2) քղանցք, ընչաքաղց, անպատմելի, հանրահայտ
3) անմտություն, տեսչական, բազմամյա, մրցավազք
4) հանդգնություն, տեղեկատվություն, շահութաբեր, անշրջելի

5. Տրված բառերից ո՞րը *չունի* հականիշ.

1) հանդուգն
2) թեթևասահ
3) հանքանյութ
4) փութկոտ

6. Փակագծերում տրված հոմանշային տարբերակներից մեկը իմաստով չի համապատասխանում նախադասությանը. պատասխանների ո՞ր տարբերակն *է ճիշտ*.

ա) Հազիվ հաջողվեց վիրավոր ընձուղտին (***1. ազատել, 2. ազատագրել***) այդ ծանր վիճակից:

բ) Այդ երկրում հաճախ ջրային պաշարներ են (***1. հայտնագործվում, 2. հայտնաբերվում***):

գ) Քննարկման ժամանակ վիճաբանությունն ակնթարթորեն (***1. ստեղծվել էր, 2. ծագել էր***) կարծիքների թերընկալումներից:

դ) Հարգելի՛ պաշտպան, Դուք (***1. իրավացի, 2. ճշմարիտ***) չեք այդ հարցում:

1) ա – 1, բ – 2, գ – 2, դ – 1
2) ա – 2, բ – 1, գ – 2, դ – 2
3) ա – 1, բ – 1, գ – 2, դ – 1
4) ա – 2, բ – 1, գ – 1, դ – 2

7. Ո՞ր նախադասության մեջ բառագործածություն *սխալ կա*.

1) Ըստ հեղինակի՝ թեթևամիտ մարդիկ ավելի հաճախ են հաջողության հասնում:
2) Մեր ծրագիրը մտացածին է, որովհետև անցել է մշակման հիմնավոր և երկար ուղի:
3) Ազգային և համամարդկային գաղափարախոսությունները հակոտնյա իրողություններ չեն, եթե խորապես մարդասիրական հիմքեր ունեն:
4) Լուսնի աղոտ լույսի տակ թեթև ուրվագծվում էր ուխտավորի կերպարանքը:

8. Փակագծերում տրված բառերից (բառաձևերից) մեկը իմաստով չի համապատասխանում նախադասությանը. պատասխանների ո՞ր տարբերակն *է ճիշտ*.

ա) Երեխայի խնամքի համար տրված գումարների վրա (***1. բռնագրավում, 2. բռնագանձում***) չի տարածվում:

բ) Թերարժեքության (***1. բարդությունը, 2. բարդույթը***) առաջին անգամ ուսումնասիրել է ավստրիացի հոգեվերլուծաբան Ալֆրեդ Ադլերը:

գ) Կրթօջախները Թարգմանչաց տոնի առթիվ (***1. ծրագրավորել են, 2. ծրագրել են***) մեծ միջոցառում կազմակերպել:

դ) (***1. Անօրինակ, 2. Անօրինական***) սխրագործությունները պատմվում են սերնդեսերունդ:

1) ա – 2, բ – 1, գ – 1, դ – 2
2) ա – 1, բ – 1, գ – 2, դ – 2
3) ա – 1, բ – 2, գ – 1, դ – 1
4) ա – 2, բ – 2, գ – 2, դ – 1

9. Ո՞ր տարբերակում բառերը նույն իմաստը *չունեն*.

1) քաղաքամայր – մայրաքաղաք
2) գագաթաժողով – գագաթնաժողով
3) լրջմիտ – լրջամիտ
4) հրձիգ - հրաձիգ

10. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.

1) փափկասուն, վիպագիր, սպասք, խաղաղապահ
2) սարահարթ, հանքափոր, ռուսամետ, ձկնորս
3) մենակյաց, սկյուռ, հողաթումբ, վաչկատուն
4) վերնահարկ, մանկամիտ, ուղեկից, բռնակալ

11. Նշել այն բառերի համարները, որոնք թվականներ *են*.

1. տասնապատիկ, 2. քսաներկուերորդ, 3. քառորդային, 4. ութնյակ, 5. մեկուկես, 6. հարյուրավոր, 7. վեցական, 8. եռակի, 9. մեկ երկրորդ, 10. հազարանոց

12. Ո՞ր շարքի բոլոր բառերում բայական ածանց *կա*.

1) համընկնել, անցնել, մտմտալ, գտնել
2) մատնել, ահագնանալ, դյուրացնել, լիանալ
3) հզորանալ, տեսնել, կորցնել, բոցկլտալ
4) պրծնել, երկնել, հասնել, մեռնել

13. Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ *չկա*.

1) Աշունն անծանոթ համ ունի քամու, Բայց արև կա դեռ թեքված դաշտերին:
2) Հայրս երկնքում գինի է քամում, Որ հյուրասիրի իր անհաշտներին:
3) Ուրիշ ոչ մի տեղ չեմ կարողանա հանգիստ հող դառնալ:
4) Վառվում, հրդեհվում են հետքերը նրանց, Կարմիր նժույգները հրդեհ են ու հուր:

14. Ո՞ր նախադասության մեջ է *չափ*-ը գործածված որպես կապ.

1) Մարդու վերքը, մարդու ցավը ո՛չ տակ ունի, ո՛չ **չափ** ունի:
2) Անճանաչելի լինելու **չափ** փոխվել էր:

3) Ոտանավորը բարեհունչ է, երբ **չափ** ու ռիթմ ունի:

4) Ամբոխի ոգևորությունը **չափ** չուներ:

15. Ո՞ր շարքում ձյաբանական վերլուծության *սխալ չկա*.

Երիտասարդ գիտնականներից ոչ ոք չգիտեր՝ որտեղից է վերցվում այն էներգիան, որ արձակում է ուրանը:

1) ***արձակում է*** **–** պարզ բայ

2) ***որտեղից*** – հարաբերական դերանուն

3) ***չգիտեր*** – ըղձական անցյալ

4) ***որ*** – ստորադասական շաղկապ

16. Ո՞ր նախադասությունն է միակազմ.

1) Նույն աղջիկն էիր՝ չքնաղ բոլորից:

2) Քո՛ւյր իմ, ամոքի՛ր սիրտս վշտաբեկ:

3) Ոտքերը տաք են պահում, գլուխը՝ սառը:

4) Այգին մշակելը իր հոգս ու բեռն էր:

17. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը բացահայտիչ (նախադասությունները կետադրված չեն).

1) Հովիվներն իրենց գործին էին ***կթում էին խուզում*** **ու** ***թրջվում***:

2) Հիմա սարերում ***դաշտերի վրա*** աշունն իր գույնն է դնում:

3) Նա իր աքսորը կրում էր ***որպես շքանշան****:*

4) Եղածը սեղանին էր մի Հայոց ***պատմություն*** և մի***Մեսրոպ****:*

18. Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր *կա*.

1) Ամեն առավոտ արթնացի՛ր ու պատրաստվի՛ր լույս ճառագելու:

2) Ամենալավ դրամաները չեն գրվի, որովհետև բեմում դերասանները... չեն լռում:

3) Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում:

4) Հաջողությունը ճանաչում են հաջողված մարդու դրական ազդեցությունից:

19. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված *կա*.

1) Մի՛ լքիր հույսը կտրած արարածին. նա արդեն դժբախտ է:

2) Մի քանի տաքացած գլխով որոշում մի՛ ընդունեք:

3) Տաղանդը տեսնելն է, թե չէ բոլոր մարդիկ էլ նայում են:

4) Փաստաթղթերին կցե՛ք բանկի տված անդորրագիրը:

20. Ո՞րն է բարդ նախադասություն.

1) Ուր էր թե մի ձայն, մի շշուկ հաներ:
2) Թո՛ւյլ տուր՝ ծառայեմ քեզ, իմ աննմա՛ն թագուհի:
3) Առաջադրանքը դժվար չէ, ճիշտ որ:
4) Մայրս խաղաղ մարեց որպես մի մոմ:

21. Ո՞րն է բարդ համադասական նախադասություն.

1) Այս աշխարհից, ինչ էլ լինի, մարդ հեռանում է մենակ:
2) Ուրիշ շատ հուշեր են զարթնում իմ սրտում, ջերմ ու թախծոտ հուշեր:
3) Թող հույսը չդնի Արևմուտքի վրա և Արևմուտքի նման դաշնակիցների վրա:
4) Մարդն ամեն օր ապրում է բնությամբ, և ամեն օր բնությունն է աղտոտում մարդը:

22. Ո՞ր շարքում միջադաս երկրորդական նախադասություն *կա*.

1) Իսկ Ծովինարը, թե դուրս գար, այնպես կշողար, որ արեգակը կխամրեր:
2) Անգամ մի դուռ է երբ իմ դեմ բացում քամին, Հանդիպումդ եմ հսկում, իմ Նավզիկե՛:
3) Լույսն է, որ ծնում է գաղափար, և դրա իրագործումն է, որ գուցե խավարով տանի:
4) Այնքան էր աշխատել, որ չէր զգացել՝ ինչպես քնեց:

23. Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպած բարդ ստորադասականի.

Չի կարող լինել ճշմարիտ հայրենասիրություն առանց սեփական լեզվի հանդեպ մարդու տածած սիրո:

1) Չի կարող լինել ճշմարիտ հայրենասիրություն առանց նրա, որ մարդ սեր չտածի սեփական լեզվի հանդեպ:
2) Չի կարող լինել ճշմարիտ հայրենասիրություն առանց այն բանի, որ մարդ սեր չտածի սեփական լեզվի հանդեպ:
3) Չի կարող լինել ճշմարիտ հայրենասիրություն առանց սիրո, որ մարդ տածում է սեփական լեզվի հանդեպ:
4) Չի կարող լինել ճշմարիտ հայրենասիրություն առանց մարդու այն սիրո, որը տածում է սեփական լեզվի հանդեպ:

24. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառության *սխալ կա*.

1) Արցունքի մեծ-մեծ կաթիլները կախվեցին մորս շագանակագույն աչքերում:
2) Հարցազրույցում մեջբերումներն արվել էին առանց խմբագրումների:
3) Նախագծի առաջին ընթերցումից հետո, բացառությամբ որոշ դրույթները, շատ կետեր փոփոխվել են:
4) Թո՛ւյլ տուր մնալ և գնալ մինչև վերջ՝ հանուն հայրենիքի ու սրբազան հավատի:

25. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության *սխալ չկա*.

1) Գյուղին մոտենալով՝ աշխույժ աշխատող մշակների ձայն լսեցի:
2) Նրանից՝ որպես մարզական մեկնաբան, այնքան էլ գոհ չէին:
3) Եթե օտարվում են շենք կամ շինություն, ապա օտարման են ենթակա այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:
4) Հեռվից կապույտին էր տալիս երդիկների ծուխն ու ամպի բարակ մի ծվեն:

26. Տրված բառաձևերի՝ նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն *է ճիշտ*.

Ապա ....., ... շալակեց չորացած ցողունների կապը և ..... ոտքերը ծերունու հուշիկ քայլերով ..... դեպի այգու դուռը:

1) կռացավ, դժվարությամբ, ուղղեց, հոգնած
2) դժվարությամբ, կռացավ, հոգնած, ուղղեց
3) կռացավ, դժվարությամբ, հոգնած, ուղղեց
4) դժվարությամբ, կռացավ, ուղղեց, հոգնած

27. Ո՞ր տարբերակը տրված նախադասության տրամաբանական ճիշտ շարունակությունը *չէ*.

Բնական մարգարիտի բոլոր տեսակների գինը իջեցնում էին ճապոնացիների պատրաստած արհեստական մարգարիտները, ...

1) քանի որ ունեին տեսակային և գունային հարուստ բազմազանություն*:*
2) թեև բնական մարգարտի որոշ տեսակների գինը մնացել էր անփոփոխ:
3) չնայած բնական մարգարիտն ուներ իր հաստատուն գնորդների խումբը:
4) ինչի պատճառով սնանկացման եզրին էին բնական մարգարիտ վաճառողները:

28. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պետք է դրվի բութ.

1) Ուզում ես ապրել նշանակում է դեռ սիրելու ինչ-որ բան ունես:

2) Օրենքը երկու ամսից համարվելու է ուժը կորցրած:
3) Հանրության մեջ իրեն պահում էր որպես հանրահայտ մեկը:
4) Նախընտրեցինք մի լավ հյուրանոց հեռու բայց գողտրիկ:

29. Գործառական ո՞ր ոճով է շարադրված տրված տեքստը.

Տարազը պատմական տարբեր դարաշրջաններում զանազան երկրներին, ժողովուրդներին, էթնիկական և տարածքային խմբերին, բնակչության որոշակի շերտերին բնորոշ հագուստ է՝ ձևվածքի, գույնի, նյութի տեսակի, արտաքին հարդարանքի (զարդերի, սանրվածքի, մորուքի, դաջվածքի և այլնի) առանձնահատկություններով: Տարազի ընտրությունը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, ազգային բնույթով, կենցաղով և այլ հանգամանքներով:

1) հրապարակախոսական
2) գիտական
3) պաշտոնական
4) գեղարվեստական

30. Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված տրված գործնական գրության տեսակը.

Երևան 21.05.2022

Ես՝ Վահան Հակոբի Պողոսյանս (անձնագիր՝ AC 0000000, տրված՝ 10.02.2018, ում կողմից՝ 003, բն. վայր՝ Երևան, Աճառյան 4, բն. 18), տպարանից ստացա «Հայոց լեզու 8» դասագրքի 110 օրինակ Երևանի թիվ 114 ավագ դպրոցի գրադարանին հատկացնելու համար:

(ստորագրություն) Վահան Պողոսյան

1) քաղվածք
2) տեղեկանք
3) ստացական
4) բացատրագիր

31. Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել տարբերակներից որդէ մեկը՝ *Ճիշտ է, Սխալ է.*

1) Թեև հոմանիշներն ունեն մոտ կամ նույն իմաստներ, սակայն միշտ չէ, որ կարող են իրար փոխարինել:
2) Ձեղչված ստորոգյալով նախադասությունը երկկազմ նախադասություն չէ:
3) Հաստատական նախադասության իմաստը հաճախ կարելի է արտահայտել ժխտական նախադասությամբ:

4) ***Որպես*** կամ ***իբրև*** կապով ձևավորված երկրորդական անդամը բացահայտիչ է, եթե նույնիսկ լրացնում է ստորոգյալին, ինչպես՝ «Գնաց մերթ իբրև քուրդ հովիվ մերթ իբրև քաղցած գայլ» (նախադասությունը կետադրված չէ):
5) Կարճ ուրիշի ուղղակի խոսքը կարող է կետադրվել բութով:
6) Սեռի քերականական հատկանիշ ունեն հայերենի կանոնավոր և անկանոն բոլոր բայերը:

32. Ընդգծված դերանուններից ո՞րն է գործածված *շատ* բառի նշանակությամբ.

1) ***Ինչե՛ր*** ասես, որ չեն արել այս ձեռքերը.....
2) Պսակվելիս ***ո՛նց*** են պարել այս ձեռքերը....
3) 1960-ականներ, ազգային հուժկու զարթոնք....Եվ ***ի՛նչ*** տարիներ:
4) ***Ինչքա՛ն*** ցավ եմ տեսել ես, Նենգ ու դավ եմ տեսել ես....

33. Ո՞ր նախադասության մեջ բառի ավելորդ գործածություն *չկա*.

1) Այդ երկրում նախագահը պետության առաջին դեմքն է հանդիսանում:
2) Օրենքն իր մեջ ներառում է մի քանի առանցքային դրույթներ:
3) Սկսվեց երկու երկրների՝ փոխադարձ փոխհարաբերություններ ձևավորելու նիստը:
4) Լրագրողը պաշտոնյային դատի է տվել՝ պահանջելով բարոյական վնասի փոխհատուցում:

34. **Նշել այն դարձվածքների համարները, որոնք կարող են գործածվել նայ որպես սովորական բառակապակցություն (ոչ դարձվածքային նշանակությամբ).**

1. ականջի հետև(ը) գցել, 2. խոսքը մեր մեջ, 3. կրակ կտրել, 4. խոսքը կտուրը գցել, 5. իր կնիքը դնել, 6. կյանքի թելը կտրվել, 7. ձեռքերը ծալած նստել, 8. աշխարհից կուշտ

35. **Ո՞ր շարքի բոլոր բառերն են *պարզ* (առանց ածանցի).**

1) ատրճանակ, հրաման, մահակ, դղյակ
2) ողկույզ, ելուստ, մտրակ, դրախտ
3) կամուրջ, կառույց, հանդուգն, բանակ
4) նոութբուք, հատուկ, պատասխան, անտառ

36. Ո՞ր բառն է կազմված *արմատ + արմատ + ածանց* կաղապարով.

1) հարադրավոր

2) վերելակ
3) գերադասելի
4) ստորագրություն

37. Նախադասություններում հոդի ո՞ր տեսակը գործածված չէ.

1) Մի՛ գանահարիր արդեն ընկածիս, մեղավոր եմ ես….:
2) Լեզուդ քե՛զ քաշիր. մեկ էլ տեսար՝ ամեն ինչ հակառակն է գնում:
3) Երազեցի ընդմիշտ, որ կարոտիս կառչած՝ Ինձ սպասում է իմ Նավզիկեն….:
4) Հավատդ ո՞ւր է, մա՛րդ Աստծո, մի՛ թող հուսալքությունը թուլացնի կամքդ:

1) ստացական
2) ցուցական
3) դիմորոշ
4) որոշյալ

38. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված դերանունները տվյալ դեպքում գործողության հատկանիշ չեն մատնանշում.

1) Դու լուսե, դու լույս…. Դու ***այդպես*** մաքուր, մաքուր…
2) ***Այնպե՛ս*** գգվող է երեկոն անափ:
3) Եվ ***ի՞նչ*** տենդով պատմեմ Մեր անանցյալ անցյալը:
4) Սիրտդ լիքն է սիրո հրով, Բայց խոսելու ***ոչինչ*** չկա:

39. Ընդգծված բոլոր բայերը անկանոն են. դրանցից որի՞ կազմության մեջ է անկանոնություն դրսյորվել.

1) Եվ այնքան պիտի ես հարստանամ, Որ… համերգի տոմս ***առնեմ*** ու… գնամ Բեթհովեն լսեմ:
2) Եվ թող ***տեսնեն*** իմ աչքերի մեջ կախվածի, Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:
3) ***Տա՛ր*** ինձ լուսազգեստ, օտար մի եզերք:
4) Տարիները ի զորու չեն ջնջելու հիշողությունների ***թողած*** խոր հետքերը:

40. Ո՞ր նախադասության մեջ է ճիշտ նշված նախադասության ընդգծված անդամի պաշտոնը.

1) Տիրոջը ***տան համար*** չեն հարգում, տիրոջ շնորհիվ են տունը հարգում: (*նպատակի պարագա*)
2) Անտառով՝ քարքարոտ ***կածանով***, բարձրանում էր Սոսեն: (*տեղի պարագա*)
3) Դեսպանը Տավուշի մարզ հետաքրքիր ***գիրք-նվերներով*** էր եկել: (*ձևի պարագա*)

4) ***Հեռավար կրթությանը պատրաստ չլինելով***՝ առայժմ պետք է հրաժարվենք այն կիրառելուց: (*զիջման պարագա*)

41. Ո՞ր նախադասության մեջ է հնարավոր կատարել ընդգծված անդամների շարադասության փոփոխություն՝ առանց դրանց քերականական իմաստի փոփոխության.

1) Մի օր ***մի եղնիկ մի գայլ*** տեսավ:
2) ***Ներքևը՝ ձորում***, գետն է աղմկում:
3) ***Դիտողություններդ մեղմ և հստակ*** կասես:
4) ***Ասված խոսքն*** այլևս հետ չես բերի:

42. **Ո՞ր տարբերակում է երկրորդական նախադասության բնույթը սխալ նշված.**

1) Ինչ վերադարձել է քաղաքից, չեմ տեսել նրան: (*ժամանակի պարագա*)
2) Մուրանոյի մշակման ձևը հիմնականում նույնն է, ինչ բյուրեղապակունը: (*որոշիչ*)
3) Հաջողության գաղտնիքն այն է, որ հաջողության գաղտնիք չկա: (*ստորոգելի*)
4) Եվ ո՞ւմ հաճելի չէ, երբ իր մասին գովեստի խոսքեր է լսում: (*ենթակա*)

43. Ո՞ր գծապատկերն է *ճիշտ*.

Կուզես՝ խփի՛ր կամ ծնկի՛ր, բայց անտարբեր մի՛ լսիր, թե քեզ ինչպես են վիրավորում:

1)


2)


3)


4)


44. Ո՞ր տարբերակում է մեջբերված ուղղակի խոսքը ճիշտ փոխակերպած անուղղակի խոսքի.

1) ***Մայրն ասաց.***
— Գնա՛, Աստծու գութն ու ողորմածությունը քեզ հետ են, անփորձանք է ճամփադ:

Մայրն ասաց, որ գնա, Աստծու գութն ու ողորմածությունը իր հետ են, անփորձանք է նրա ճամփան:

2) ***— Եթե հաճելի է քեզ, նազելի՛ս, այսօր կգնամ և վաղը կբերեմ,— ասաց Ադամն ուրախացած:***
Ադամն ասաց ուրախացած, որ եթե իրեն հաճելի է, այսօր կգնա և վաղը կբերի:

3) ***— Մտածի՛ր ընկերոջդ համոզելու մասին,— խորհուրդ տվեց գրաբերը,— մնացածը արդեն մեր գործն է և Ձեզ չպետք է մտահոգի:***
Գրաբերը խորհուրդ տվեց, որ մտածի ընկերոջը համոզելու մասին, մնացածը արդեն իրենց գործն է և նրանց չպետք է մտահոգի:

4) ***— Մենք վաղը կրկին կհանդիպենք քո բակում,— խոստացավ ինձ,— և ես ամեն ինչ կբացատրեմ:***
Ինձ խոստացավ, որ մենք վաղը կրկին կհանդիպենք իմ բակում, և ինքը ամեն ինչ կբացատրի:

45. Ո՞ր մտքերը չեն հակասում տեքստի բովանդակությանը.

Աֆրիկայում կա մի ցեղ, որը հետաքրքիր սովորույթ ունի: Երբ ցեղից ինչ-որ մեկը վատ արարք է թույլ տալիս, նրան բերում են հարազատ միջավայր, շրջապատում են և երկու օր շարունակ պատմում միայն այն լավ ու բարի արարքների մասին, որ նա արել է, և շնորհակալություն են հայտնում դրա համար: Նրանք վստահ են, որ մարդն աշխարհ է գալիս կատարյալ: Ամեն մեկը սեր է ուզում գտնել, երջանկություն, անվտանգություն, ապահովություն, ինչի պատճառով այդ մրցավազքում ակամա սխալ է թույլ տալիս: Այդ սխալը ազդանշան է, որ մարդը օգնության կարիք ունի: Դրա համար էլ միավորում են իրենց ջանքերը՝ բարձրացնելու ընկածին, վերականգնելու նրա իրական էությունը, նրան հիշեցնելու, թե որքան լավն է նա: Ինչ խոսք, երևույթն ուսանելի է:

1) Բարեկեցիկ կյանքով ապրելու նպատակով մարդ թույլ է տալիս սխալներ:
2) Սովորույթի համաձայն՝ սխալ գործած մարդուն երկու օր շարունակ պատմում են նրա իսկ բարի գործերի մասին, որ նա այլևս չսխալվի:
3) Այս երևույթը կարելի է կիրառել նաև մեկ ուրիշ միջավայրում:
4) Այդ սխալը՝ որպես ազդանշան, մարդ գործում է, որ իրեն օգնեն:

46. Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել տարբերակներից որդէ մեկը՝ *Ճիշտ է, Սխալ է.*

1) Ոչ բոլոր երկհնչյունների գրությունն ու արտասանությունն են համապատասխանում իրար:
2) Բոլոր գոյականների հոլովումը կանոնավոր է:
3) Կան դեպքեր, երբ բայի սեռը հնարավոր է որոշել միայն նախադասության մեջ:
4) Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կապակցվում են միայն շաղկապներով և հարաբերական բառերով:
5) Արևելահայերենն ու արևմտահայերենը չունեն հնչյունական տարբերություններ, իսկ բառային և քերականական տարբերություններ ունեն:

6) Չկան բայեր, որոնց սկզբնաձևը անորոշ դերբայը չէ:

47. Ո՞ր շարքում նշված բոլոր հերոսներն են «Սասնա ծռեր»-ում մարմնավորում ժողովրդի կենսափորձն ու իմաստնությունը.

1) Խանդութ խանում, Սասունցի Դավիթ, Մեծ Միհր

2) արտատեր պառավ, Քեռի թորոս, Ձենով Հովան

3) Վերգո, Ձենով Հովան, Ծովինար

4) Սանասար և Բաղդասար, Սասունցի Դավիթ, Փոքր Միհր

48. Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ Քուչակի սիրո հայրեններին.

1) կանացի բնավորության որոշ գծերի արտացոլում
2) կնոջ արտաքին գեղեցկության նկարագրություն
3) կնոջ նկատմամբ սիրո վերաճումը ազգի և հայրենիքի նկատմամբ սիրո
4) սիրո տառապանքի արտացոլում

49. Թվերի ո՞ր դասավորությունն է ճիշտ արտացոլում միջնադարի նշված հեղինակների ժամանակագրական հաջորդականությունը.

ա) Ներսես Շնորհալի

բ) Գրիգոր Նարեկացի

գ) Նահապետ Քուչակ

դ) Ֆրիկ

ե) Սայաթ-Նովա

1) բ, դ, ե, ա, գ
2) բ, ա, դ, գ, ե
3) ա, բ, գ, դ, ե
4) ե, գ, դ, բ, ե

50. «Ալպիական Մանուշակ» պատմվածքում ի՞նչ է խորհրդանշում հետևյալ պատկերը.

Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

1) Կյանքի շարունակության ու հավերժության գաղափարը:
2) Հայոց լեռնաշխարհի հովվերգական խաղաղությունը:
3) Բնության և մարդկային կյանքի աններդաշնակությունը:
4) Կյանքի երազային գեղեցկությունը, որը հակադրվում է կոպիտ իրականությունը:

51. Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել տարբերակներից որդէ մեկը՝ *Ճիշտ է, Սխալ է.*

1) Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» արծարծված են աշխարհաբար լեզվով գրելու, գրականության բովանդակությունն արմատապես փոխելու, հերոսի և միջավայրի ներդաշնակ պատկերման ու տիպականացման խնդիրները:
2) Պ. Սևակը «Անլռելի զանգակատուն» պատմակենսագրական պոեմում գնահատվում է հայ երգը օտար ազդեցություններից մաքրող Կոմիտասի պատմական ծառայությունը՝ համեմատելով Մաշտոցի հետ:
3) Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում ազնիվ գործի և հայրենիքի հանդեպ սիրո գաղափարները արտահայտված են խորունկ կերպարների և պատկերների միջոցով:
4) Դրամային գլխավորապես բնորոշ է կյանքի երկու ծայրահեղ թևերի պատկերումը. և՛ ողբերգության, և՛ կատակերգության ամենաբնորոշ տարրերը այնտեղ դառնում են գերիշխող:
5) «Սամվել» պատմավեպում Ռաֆֆին իր արծարծած ազգապահպանության գաղափարներով հակադրվում է 19-րդ դարի 80-ական թվականների Ռուսաստանի և Թուրքիայի հայահալած քաղաքականությանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Յու. Ավետիսյան

Պատասխանները

1 – 3
2 – 1, 2, 4, 7, 8, 9, 10
3 – 2
4 – 1
5 – 3
6 – 1
7 – 2
8 – 4
9 – 4
10 – 1
11 – 2, 5, 7, 9
12 – 3
13 – 2
14 – 2
15 – 1
16 – 3
17 – 4
18 – 1, նաև՝ 4, նաև՝ 1, 4
19 – 4
20 - 2
21 – 4
22 – 1
23 – 3
24 – 1, 3
25 – 1
26 – 3
27 – 2

28 – 1, 4
29 – 2
30 – 3
31 – ɑ́ , u, ɑ́, u, ɑ́, ɑ́
32 – 4
33 – 4
34 – 1, 5, 7
35 – 1
36 – 2
37 – 2
38 – 1, 3, 4
39 - 3
40 – 3
41 – 4
42 – 2
43 – 1
44 – 4
45 – 3
46 – ɑ́, u, ɑ́, u, u, u
47 – 2
48 – 3
49 – 2
50 – 4
51 – u, ɑ́, u, u, ɑ́